

## ОБОРОНА И БЕЗОПАСНОСТЬ

### Պետության ռազմավարական-անվտանգային մշակույթը և պատերազմի նախապատրաստումը որպես կառավարման առանցքային պայման

Մանվելյան Արմեն Բ.

պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,

Միջազգային հարաբերությունների բաժնիի ավագ գիտաշխատող (Երևան, ՀՀ)

armenmanvelyan@gmail.com

ՀՏԳ 327; EDN: MСРРLԲ

Հանգուցաբառեր՝ անվտանգություն, պետություն, միջազգային հարաբերություններ, ռազմավարություն, մշակույթ, պատերազմ

#### Культура стратегической безопасности и подготовка к войне как ключевое условие управления государством

Манвелян Армен Б.

к.и.н., Институт востоковедения, Национальная академия РА  
старший научный сотрудник отдела международных отношения (Ереван, РА)

armenmanvelyan@gmail.com

**Аннотация.** Противостояние войны – лучшая проверка устойчивости государства и прочности его институтов, показывающая его слабые и сильные стороны, риски и возможности в жесточайшей конкуренции. Войну, как правило, выдерживают те государства, которые понимают серьезность этого вызова и начинают готовиться к нему еще в мирное время. Для такой подготовки важно внедрять стратегическое мышление и соответствующую культуру в развитии государства. Стратегическое планирование должно стать основным видением развития любого государства и особенно страны в условиях риска перманентной войны. В 21 веке увеличилась частота повторения войны, и вероятность столкнуться с подобной угрозой сегодня гораздо выше, чем сто или двести таму лет назад. Поэтому разработка стратегии безопасности становится для государств экзистенциальной необходимостью. Поиск методологии разработки и оценки безопасности начинается с осознания необходимости внедрения культуры стратегического мышления.

**Ключевые слова:** безопасность, государство, международные отношения, стратегия, культура, война.

#### The state culture of security strategy and preparation for war as a key condition of governance

Manvelyan Armen B.

PhD in History, Senior Research Fellow, Department of International Relations,  
Institute of Oriental Studies, National Academy of RA (Yerevan, RA)

armenmanvelyan@gmail.com

**Abstract.** The confrontation of war is the best test of the stability of the state and the strength of its institutions, showing its strengths and weaknesses, risks and opportunities in the fiercest competition. War, as a rule, is sustained by those states that understand the seriousness of this challenge and begin to prepare for it even in peacetime. For such preparation, it is important to introduce strategic thinking and an appropriate culture in the development of the state. Strategic planning should become the main vision of the development of any state, and especially a country in the face of the risk of permanent war. In the 21st century, the frequency of the repetition of war has increased, and the likelihood of facing such a threat today is much higher than a hundred or two hundred years ago. Therefore, the development of a security strategy becomes an existential necessity for states. The search for a methodology for the development and evaluation of safety begins with the recognition of the need to implement a culture of strategic safety mission.

**Keywords:** security, state, international relation, strategy, culture, war.

#### Առաջաբան

Պատերազմի դիմակայությունը պետության կայացվածության և նրա կառուցվածքի ամրության լավագույն փորձությունն է, որը ցույց է տալիս դաժանագույն այդ մրցակցության մեջ վերջինիս հնարավորությունները՝ թույլ և ուժեղ կողմերը, ռիսկերը և հնարավորություն-

ները: Պատերազմին որպես կանոն կարող են դիմակայել այն պետությունները, որոնք հասկանալով այդ մարտահրավերի ողջ լրջությունը սկսում են դրան նախապատրաստվել դեռ խաղաղության շրջանում:

Նմանատիպ նախապատրաստման համար կարևոր է պետության զարգացման գործում

անվտագային-ռազմավարական մտածելակերպի և համապատասխան մշակույթի ներմուծումն ու կիրառումը: Ռազմավարական պլանավորումը պետք է դառնա ցանկացած պետության ու հատկապես մշտական պատերազմի ռիսկի տակ գտնվող երկրի զարգացման հիմնական տեսլականը: Պատերազմների կրկնման հաճախակա-նությունը 21-րդ դարում աճել է և այսօր նմանա-տիպ սպառնալիքին բախվելու հավանականու-թյունը շատ ավելի մեծ է քան հարյուր կամ երկուհարյուր տարի առաջ էր: Հետևաբար դրանց դիմակայության հաշվառմամբ անվտան-գային-ռազմավարությունների մշակումը պե-տությունների համար դառում է գոյապահ-պանական անհրաժեշտություն:

Ռազմավարական-անվտանգային մշա-կույթի ներդրման անհրաժեշտության գիտակ-ցությունից է սկսվում պետության զարգացման ու դրա անվտանգության գնահատման մեթոդա-բանության որոնումները: Իսկ նման աշխա-տաքների իրականացման համար անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն անվտանգային աշխարհա-քաղաքական միջավայրի փոփոխության դինա-միկան այլև իրականացնել դրա ամենօրյա դիտարկում՝ անհրաժեշտ տվյալների հավաքման և դրանց շարունակական վերլուծության համար:

#### **Անվտանգային ռազմավարության մշակ-ման մի շարք մոտեցումների մասին**

Ըստ Քեմբրիջի բառարանի ռազմավա-րությունը՝ *«հաջողության հասնելու մանրամասն պլան է այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են պատերազմը, քաղաքականությունը, բիզնեսը, արդյունաբերությունը, սպորտը, կամ նման իրա-վիճակները պլանավորելու ունակությունն է»* [1]: ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտու-թյունների ինստիտուտի Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարանում Ռազմավարություն հասկացու-թյունը մեկնաբանվում է, որպես *«պետության ռազմական (պաշտպանական) անվտանգության սպահովման, այդ թվում պատերազմի կանխման, ագրեսիայի հետմղմանը պետության ու զինված ուժերի պատրաստման տեսությունն ու պրակտի-կան, ռազմավարական օպերացիաների և ընդհա-նուր առմամբ պատերազմի պլանավորումն ու վարումը»* [2, էջ 56]:

Ամերիկայի Տեխասի համալսարանի պրո-ֆեսոր Ջերեմի Սուրին ազգային անվտանգու-թյան ռազմավարությունը ներկայացնում է որպես մի փաստաթուղթ, որը *«պետական չինովնիկներին ստիպում է պատկերացնել թե ինչպես է աշխարհը գործում և թե ինչպես կարելի հաջողության հասնել»* [4, էջ 142]: Առանց նմանա-տիպ փաստաթղթի գործող իշխանություններ չեն կարող պատկերացնել այն ռազմավարական խորությունը, որում հարակավոր է գործել

հոջողության հասնելու համար: Ջերեմի Սուրին այն կոչում է նաև ռազմավարական պլանա-վորում, որը հնարավորություն է տալիս *«տեսնել հնարավորությունը նույնիսկ քառսի մեջ և սպառ-նալիքը ստորյա(routine) քաղաքականությու-նում»* [5]:

*«Ատորյա (routine) քաղաքականության սպառ-նալիք»* սա այն է ինչը կատարվում է շատ պետություններում, որոնք ի վիճակի չլինելով վերլուծել ու հասկանալ իրենց շրջապատը, ներքին ու արտաքին զարգացման միտումները: Աճող ու հզորացող ներքին ու արտաքին սպառ-նալիքները, իրենց ատորյա (routine – ընթացա-կարգային) քաղաքականությամբ, որը առաջին հայացքից կարող է նույնիսկ հաջողված թվալ, իրականում հանգեցնում է անհաջողությունների ու ձախողումները: Վերջին տարիներին շատ պետությունների ձախողումը դա հենց ռազմ-ավարական մտածելակերպի բացակայության հետևանք է, և տուրք տալն է ատորյա (routine – ընթացակարգային) քաղաքականությանը:

Ազգային անվտանգության ռազմավարու-թյունը դա նաև արդյունավետ կառավարման կարևորագույն պայմաններից մեկն է: Իսկ արդյունավետ կառավարությունը դա հենց հաջողության և ընդհանրապես հաջողակ պետության կառուցման թիվ մեկ պայմանն է: Ինչպես նշում է ամերիկացի գիտնական Ջերեմի Սուրին պետությունների անհաջողության հիմքում առաջին հերթին ոչ արդյունավետ կառավարումն է, ինչը կարող է ձախողման հասցնել ցանկացած պետական համակարգ, եթե բացակայում է ռազմավարական մշակումներ իրականացնելու ընդունակությունը [5]:

Ռազմավարությունների մշակման հարցով հայտնի մասնագետ, Մակգիլ (Կանադա) համա-լսարանի պրոֆեսոր Հենրի Մինթաբերգը կարծի-քով *«ռազմավարությունը դա որոշումների կայաց-ման ընդհանուր պատկերն է»* [6, էջ 940]: Այսինքն, երբ ռազմավարության հստակեցումը հնարա-վորություն է տալիս տեսնել իրադարձություն-ների զարգացման ընդհանուր պատկերը և ընդունել համապատասխան որոշումներ, ելնելով այն վերլուծությունից, որը հնարավորություն է տալիս հասկանալ զարգացման տրամաբա-նությունը:

Ըստ պրոֆեսոր Հենրի Մինթաբերգի, դրա համար հարկավոր է իրականացնել տվյալների անընդհատ հավաքագրում, դրանց հիման վրա սպասվելիք փոփոխությունների մասին վերլու-ծություն և համապատասխան հետևություններ անելու համար [6, էջ 940]: Սա հնարավորություն է տալիս նաև հետևել ու հասկանալ առկա ռիսկերի դինամիկ աճը՝ մարտահրավերի, վտանգի և սպա սպառնալիքի, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս տեսնելու անվտան-գային փոփոխությունների այն պատկերը, որն

առկա է տարածաշրջանում կամ ամբողջ աշխարհում: Այս գործընթացին պետք է հետևի վտանգների փոփոխման ու զարգացման դինամիկայի միտումների կանխատեսումը (սցենարների կազմումը), ինչը առանցքային նշանակություն ունի սպառնալիքի վտանգի աստիճանը գնահատելու համար:

Նկարագրված անվտանգային դինամիկան փոփոխական է և գտնվում է անընդհատ շարժի մեջ՝ մեծանալով կամ նվազելով, իսկ երբեմն էլ կարող են ի հայտ գալ նոր ռիսկեր ու սպառնալիքներ, որոնք նույնպես չափման, հաշվարկման ու դրա փոփոխման դինամիկայի կանխատեսման կարիք ունեն:

Այսինքն առկա ու հնարավոր ռիսկերի ու սպառնալիքների զարգացման դինամիկայի հստակեցումը հնարավորություն է տալիս մշակել համապատասխան քաղաքականություն այդ վտանգները նվազեցնելու, չեզոքացնելու կամ կանխարգելելու համար: Եվ միայն այս ամբողջական մշակումից հետո կարող ենք ունենալ անվտանգային միջավայրի մասին ընդհանուր պատկերը, որը, ինչպես կենդանի օրգանիզմ, անընդհատ փոփոխվում է և հետևաբար այն մշտական հետազոտման ու մշտադիտարկման կարիք ունի:

Նմանատիպ գործընթացը՝ անընդհատ մշտադիտարկումը, և համապատասխան քաղաքականությունների մշակման ամբողջությունն էլ հնարավորություն կտա ասելու, որ ունենք առկա ու սպասվելիք մարտահրավերներին համապատասխան անվտանգային ռազմավարության մշակման մեթոդաբանություն: Սա նաև նշանակում է, որ անընդհատ մշակման ու բարելավման կարիք ունի անվտանգային ռազմավարությունը՝ ժամանակ առ ժամանակ թարմացնելով ու կատարելագործելով մեթոդաբանական այն զինանոցը, որը կիրառվում է նշված մշակումներն ու վերլուծությունները կատարելու համար: Այս մեթոդաբանությունը մշակելիս կարևոր են նորարարական և ստեղծագործ մոտեցումները, ինչը հնարավորություն կտա ստեղծել ուրույն ռազմավարություն, որը կհամապատասխանի տվյալ պետությանը և տարածաշրջանին: Այս գործընթացը հնարավորություն կտա նաև մշտապես մեկ քայլ առաջ լինել բոլորից՝ իրադարձությունների փոփոխությունների ընթացքում:

Եթե անվտանգային ռազմավարության մեթոդաբանության մշակումը ակադեմիական աշխատանք է, ապա բուն ռազմավարության մշակումը հնարավոր է միայն տարբեր՝ գիտական ինստիտուտների և պետական գերատեսչությունների փոխհամագործակցության շնորհիվ միայն: Սա միջդիսցիպլինար ուղղություն է, որտեղ դրա մշակման տարբեր էտապներում կարող են ներգրավված լինել թե՛ հումանիտար,

թե՛ ճշգրիտ և թե՛ ռազմական գիտությունների մասնագետները, տարբեր ինստիտուտներ ու հետազոտական կենտրոններ, ինչպես նաև տարբեր նախարարություններ ու գերատեսչություններ:

### **Անվտանգային-ռազմավարության կալսցման ԱՄՆ փորձը**

Անդրադարձը ամերիկյան փորձին կարևոր է, քանի որ այդ պետությունն է համաշխարհային առաջատարը անվտանգային-ռազմավարական փաստաթղթերի՝ դրանց մեթոդաբանությունների մշակման, ինչպես նաև այդ ամենը օրենսդրական մակարդակով ապահովման առումով: Ամերիկացիները այս բնագավառում ահռելի աշխատանք են իրականացնում, հետևողականորեն զարգացնելով և առաջ մղելով անվտանգային-ռազմավարության մշակումների նորանոր մեթոդաբանությունները, միաժամանակ օրենսդրորեն ուժեղացնելով դրանց շարունակական մշակումը և պետական մակարդակով կիրառման պարտադրանքը:

1986 թ. ԱՄՆ Կոնգրեսը ընդունեց Գոլդվորթեր-Նիկոլսի պաշտպանական գերատեսչության վերակառուցման մասին ակտը, որով փոփոխություն կատարվեց Ազգային անվտանգության օրենսդրությունում (ընդունված դեռ 1947 թ. Կոնգրեսի կողմից): Այդ փոփոխությամբ Կոնգրեսը պարտադրում էմ բոլոր նախագահներին գրավոր կերպով ներկայացնել տարեկան զեկուլյցներ մեծ ռազմավարության (grand strategy) մասին: Այս ակտով ԱՄՆ Կոնգրեսը փորձում էր կանոնակարգել և օրինականացնել ազգային անվտանգության ռազմավարության ընդունումը և կանոնակարգեր ազգային ռեսուրսների օգտագործման համակարգը միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների ընդունման համար որպեսզի պաշտպանվի պետության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները, հատկապես ազգային շահը, որը առնչվում է ազգային անվտանգության հիմնախնդիրներին [9]:

Ազգային անվտանգություն ռազմավարությունը որպես պետական անվտանգությունը համակարգող կարևորագույն՝ ռազմավարական նշանակության փաստաթուղթ առաջին անգամ ընդունվեց ԱՄՆ-ում վերը նշված օրենսդրական փոփոխությունից մեկ տարի անց՝ 1987 թ. նախագահ Ռոնալդ Ռեյգանի կողմից [7]: Սա առաջին փորձն էր ուղիված պետության անվտանգության քաղաքականության՝ ռազմավարության հստակեցման և այն այդ պետության ազգային շահերի հետ համընկման համար: Այս փորձը դեռ այն ժամանակ ցույց տվեց, որ նմանատիպ փաստաթուղթը հնարավորություն է տալիս հստակեցնել պետության զարգացման գերակա ուղղությունները և փորձ էր

պատասխանել որոշակի ժամանակահատվածի համար զարգացման հնարավոր միտումները, ինչը իր հերթին հնարավորություն էր տալիս կառուցել թե ներքին և թե արտաքին քաղաքականությունը այնպես, որ հնարավոր լինի դեմոկրատիկ մարտահրավերներին ու սպառնալիքներին:

Նշված օրենսդրական ակտից և առաջին անվտանգային ռազմավարության ընդունումից հետո՝ անցած 30 տարիների ընթացքում ԱՄՆ-ը ընդունել է ազգային անվտանգության ռազմավարության 16 փաստաթուղթ [7], որոնց ընդունման, կամ արդեն ընդունվածների մեջ փոփոխությունները կատարվել են ըստ աշխարհաքաղաքական գործընթացներում տեղի ունեցող զարգացումների սրնթացությանն ու անհրաժեշտությանը համապատասխան: Ազգային անվտանգության ռազմավարությունների ընդունման ռեկորդը թերևս պատկանում է ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնին, որն իր նախագահության 8 տարիների ընթացքում հաստատել է նմանատիպ 7 փաստաթուղթ: Ի տարբերություն Բլինթոնի ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ընդամենը 2 անգամ է հաստատել Ազգային անվտանգության ռազմավարությունը՝ 2010 թ. և 2015 թ., ինչը հավանաբար բացատրվում էր Բլինթոնի և ապա Բուշ կրտսերի ժամանակաշրջանից հետո համեմատաբար խաղաղ Օբամայի վարչակազմի ժամանակաշրջանով [8]:

Ինչևէ, այդ փաստաթղթերը, որոնք կարևորագույն նշանակություն ունեն ԱՄՆ վարչակազմերի գործունեության համար կարող են ենթարկվել որոշակի փոփոխությունների, երբ, օրինակ, որոշվում են աշխարհի այն տարածաշրջանները, որոնք գերակա-ռազմավարական նշանակություն էին ձեռք բերում, պայմանավորված աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ: Այսպես, եթե Ռոնալդ Ռեյգանի և ապա Բուշ ավագի ժամանակաշրջանում ԱՄՆ-ի համար աշխարհառազմավարական նշանակության տարածաշրջանը դա Արևմտյան Եվրոպան էր, ապա ողջ Եվրոպան, ապա Բլինթոնի, և Բուշ կրտսերի օրոք ռազմավարական նշանակության շեշտադրումները սկսեց տեղափոխվել դեպի Մեծ Մերձավոր Արևելք: Իսկ արդեն Բուշ կրտսերի և ապա Օբամայի ու Թրամփի օրոք հստակ դարձավ, որ ԱՄՆ-ի համար ռազմավարական նշանակություն է ստանում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը: Չինաստանը իր տնտեսական բուռն զարգացմամբ ԱՄՆ-ին ստիպեց ուշադրությունը շեղել դեպի իր կողմը:

Ազգային անվտանգության ռազմավարության նմանատիպ փոփոխությունները պայմանավորված էին աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհառազմա-

վարական այն զարգացումներով, որոնք տեղի ունենում և որոնք արտացոլվում են ռազմավարական նշանակության այդ փաստաթղթում: Եթե ԽՍՀՄ-ի գոյության պայմաններում Արևմուտք-Արևելք հակասությունների հիմնական զիծն անցնում էր այդ երկու ճամբարներից իրարից բաժանող Արևմտյան և Արևելյան Եվրոպայի միջով, ապա ԽՍՀՄ-ի քայքայումից հետո, ԱՄՆ-ի համար ռազմավարական նշանակություն ձեռք բերեց Մեծ Մերձավոր Արևելք անվանված տարածաշրջանը:

Նման քաղաքականությունը պայմանավորված էր ԽՍՀՄ-ի քայքայումից հետո նախապատվությունների փոփոխությամբ, ուժային կենտրոնների տեղաշարժով, Մերձավորասեյան նավթի համար պայքարի սրմամբ, գործող ավտորիտար վարչակազմների նկատմամբ պայքարի քաղաքականության որդեգրմամբ և այդ տարածաշրջանում Իրանի դերի բարձրացման դեմ պայքարով և այլն: Հասկանալի կերպով այս ամենը արտացոլվում էր նաև ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության մեջ:

Ինչպես նշացինք, ԱՄՆ-ում ազգային անվտանգության ռազմավարություն կոչվող փաստաթուղթը օրենսդրական պարտադրանքի ուժ ունի, այսինքն նախագահի կողմից ստորագրելուց հետո դրա կատարումը դառնում է պարտադիր: ԱՄՆ-ի վարչակազմները իրենց ֆինանսա-տնտեսական, արտաքին-ռազմավարական, ռազմա-արդյունաբերական, էներգետիկ-էկոլոգիական քաղաքականությունը մշակում են ելնելով այդ փաստաթղթի դրույթներից և առաջ քաշած սկզբունքներից:

### **Անվտանգային ռազմավարությունը և Հայաստանը**

Հայկական պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս Վարդան Աթոյանը իր «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» աշխատության մեջ, անդրադառնալով ազգային անվտանգության հիմնախնդրին, նշում է, որ դրա օբյեկտներն են՝ անձը, նրա իրավունքները ու ազատությունները, հասարակությունը, նրա նյութական և հոգևոր արժեքները, պետությունը, նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը [10, էջ 32]: Այսինքն անձ, հասարակություն և պետություն, սրանք են Ազգային անվտանգության հիմնական օբյեկտները, երբ խոսում ենք անվտանգային ռազմավարության մասին, ապա սրանց ավելանում են նաև միջազգային անվտանգության սուբյեկտները, որոնց ուսումնասիրությունը և համապատասխան քաղաքականության մշակումը դառնում է գլխավոր պայմանը ազգային անվտանգության հիմնական գործառնությունը իրականացնելու համար:

Ազգային անվտանգության ռազմավարության մշակման փորձ Հայաստանում իրակա-

նացվել է առաջին անգամ դեռ 2007 թ.: «Հնախազահի աշխատակազմին կից ստեղծված հանձնաժողովը զբաղվեց Հայաստանի Հանրապետության պատմության մեջ ազգային անվտանգության ռազմավարության ստեղծման առաջին փորձին:

Երկարատև աշխատանքի արդյունքում ստեղծված փաստաթուղթը՝ Ազգային անվտանգության ռազմավարությունը, իր որոշակի՝ մեթոդաբանական խնդիրներով հանդերձ, կարևորագույն նշանակություն ունեցավ ՀՀ ազգային անվտանգության հիմնական նպատակների՝ ռազմական, տնտեսական, էներգետիկ, տարածաշրջանային և այլն, թիրախավորման և դրանց կարևորությունը մատնանաշելու առումով:

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության թարմացման և վերանայման դրույթը ամրագրված է ՀՀ առաջին ռազմավարության մեջ՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթում նշված նպատակների իրականացման» [11], այս կետը, սակայն, երբեք չի կատարվել ու ճշգրտումները չեն իրականացվել:

2020 թ. հունիսին ընդունված ՀՀ 2-րդ ռազմավարությունը [3] չէր հանդիսանում նախորդի ոչ մասնագիտական և ոչ էլ մեթոդական շարադրանքը, սա ինքնուրույն գրված աշխատանք էր, որը, ինչպես ցույց տվեց հետագա զարգացումները և արցախյան 3-րդ պատերազմը, ոչ մի աղերս չունեի տարածաշրջանում ստեղծված անվտանգային միջավայրի գնահատման, այսինքն առկա մարտահրավերների և ռիսկերի ու վտանգների հասկանալու ու վերլուծելու հետ:

Այսինքն ՀՀ-ն գտնվում է մի իրավիճակում, երբ փաստացի չունենք ազգային անվտանգության ռազմավարություն, ինչը պետությանը հնարավորություն չի տալիս պատասխանելու հիմնական այն հարցին, թե ինչ տիպի տնտեսական, ռազմական, էներգետիկ քաղաքականություն պետք է վարել գոյություն ունեցող, աճող ու սպասվող մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմակայելու համար: Իսկ եթե ի վիճակի չենք հասկանալ սպառնացող մարտահրավերներն և դրանց բնույթը, ապա հնարավոր աճող վտանգների պայմաններում կարող ենք հետևություն անել, որ պետությունը պատրաստ չէ դրանց դիմակայել:

ԻՄՀՄ-ից հետո հաջորդ 30 տարիները ցույց տվեցին, որ աշխարհի շատ պետությունների կործանման ու ձախողման պատճառներից մեկն էլ դրանց պատրաստ չլինելն էր

աշխարհաքաղաքական նոր փոփոխությունների հետևանքով առաջ եկած մարտահրավերներին պայմաններում: Շատերը չկարողացան այդ մարտահրավերները ճիշտ գնահատել, ու համապատասխան քաղաքականություն մշակել: Հետևաբար այս աշխատանքը՝ անվտանգային ռազմավարության մշակումը, կարևոր նշանակություն ունի պետության գոյության և նրա զարգացման ընթացքը հասկանալու ու ի հայտ եկող մարտահրավերներին պատրաստ լինելու տեսանկյունից:

Խաղաղության մեջ գտնվող պետության համար պատերազմի հավանականությունն է այն հիմնական թիրախը, որը պետք է ընկալել որպես զարգացման անխուսափելիություն և հզոր խթան դրան դիմակայելու համապատասխան քաղաքականություն մշակելու համար:

Այս մոտեցումն ու ընկալումը հատկապես կարևոր է Հայաստանի համար, որը, գտնվելով չավարտված ռազմական հակամարտության մեջ, իր զարգացման ռազմավարությունը պետք է իրականացնի պատերազմի անխուսափելիության տրամաբանությունը հաշվի առնելով: Այսինքն, ռազմավարական թիրախավորման նման հստակեցումը պետության զարգացման ողջ տրամաբանությունը կդնի զարգացման ռազմական ռեյսերի վրա ու դրան կենթարկի պետության տնտեսական, էներգետիկ, կրթական, հոգևոր, մշակութային և այլ ուղղությունների զարգացման քաղաքականությունը:

Այսինքն, երբ խոսում են ռազմավարական թիրախավորման մասին, ապա խաղաղության մեջ գտնվող պետության համար դա, առաջին հերթին, պատերազմն է և դրա նախապատրաստման գործընթացը: Սա նշանակում է, որ ոչ թե հնարավոր, այլ սպասվելիք պատերազմի պատրաստությունն է այն ռազմավարական թիրախավորումը, որը պետք է կատարվի անվտանգային ռազմավարության մշակման գործում, իսկ այդ ռազմավարությունից բխող ռիսկերի, սպառնալիքների ու մարտահրավերներին ուղղված քաղաքականության տրամաբանությունը պետք է ուղղված լինի սպասվելիք պատերազմի հետևանքների նվազեցման, դժվարությունների արագ հաղթահարման ու հնարավորինս նվազագույն ժամանակահատվածում հաղթական ավարտն արձանագրելու համար:

#### **Պատերազմը և պետությունը**

Ամերիկացի հայտնի գիտական՝ պատմաբան, սոցիոլոգ Չարլս Թիլիին իր «Պարտադրանք, կապիտալ և եվրոպական պետություններ, 990-1992 թթ» հայտնի աշխատությունում գրում է, «պատերազմն է ձևավորում պետությունը և հսկառակը» [12, էջ 40]: Հզոր և կայացած պետությունները իրենք են կազմակերպում պատերազմներ, որը նաև այդ պետությունների հզորացման, նրանց զարգացման ու մեծ տերու-

թյունների քաղաքականության պարտադրման կարևորագույն պայմաններից մեկն է:

Խոսելով 20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի մասին Թիլին այն բնութագրում է, որպես պատերազմների արտահանման ժամանակաշրջան, «Մեծ տերությունները արդեն խուսափում են միմյանց դեմ պատերազմներ մղել», նշում է ամերիկացի գիտնականը, և որպես հոռետեսական եզրահանգում հայտարարում, որ նրանք, այսինքն մեծ տերությունները «արտահանում են պատերազմները աշխարհի այլ երկրներ, իսկ սեփական էներգիան պահպանում են միմյանց ոչնչացնելու համար առավել ուղղորդված գործողությունների համար: Մսկայն, ցանկացած պայմաններում», շարունակում է Թիլին, «ներ առջև հանում է աշխարհի ազդեցիկության անհի պատկեր, որտեղ մեծ տերությունները մեծ հաշվով չեն վարում պատերազմներ սեփական տարածքներում և այսպիսով դառնում են առավել քիչ զգայուն պատերազմի արհավիրքների հանդեպ» [12, էջ 45]:

Ու չնայած նրան, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ տերությունների միջև չկան բացահայտ բախումներ, սակայն թե 20-րդ դար և թե 21-րդ դարի առաջին երկու տասնամյակները լի են պատերազմներով՝ թե միջպետական և թե քաղաքացիական: Ըստ որոշ հաշվարկների, 20-րդ դարում տեղի են ունեցել 300-ից ավելի պատերազմներ և բախումներ, ու ընդհանուր առմամբ, այդ ժամանակաշրջանում զոհվել է 115 միլիոն մարդ ամբողջ աշխարհում:

Համեմատության համար նշենք, որ 19-րդ դարում զոհերի թիվը, ամբողջ աշխարհում, եղել է 8 միլիոն, իսկ 18-րդ դարում 4 միլիոն և այլն: Եթե մինչև 19-րդ դարը միջազգային, քիչ թե շատ մեծ հակամարտություններ ծագում էին 2-3 տարին մեկ անգամ, ապա հետագայում 1-2 տարին մեկ անգամ, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 14 ամիսը մեկ անգամ [12, էջ 110]:

Միջուկային դարաշրջանը և զսպան քաղաքականությունը ոչ մի կերպ չնպաստեց խաղաղության հաստատմանը և մահաբեր պատերազմների կրկնությունները ավելի հաճախ էին դառնում, քան նախկինում էր: Պատերազմների կազմակերպումը, դրանց վարումը, դրանց մեջ այլ պետությունների ներգրավումը և վերջապես դրանց արդյունքներն ու հետևանքները ուղղակիորեն ազդում էին պետությունների ձևավորման, դրանց ռազմական, ֆինանսական, կառավարման ինստիտուտների կայացման կամ ձևափոխման վրա:

Պատերազմն էր միջպետական մրցակցության այն դաժանագույն չափորոշիչն է, որը որոշում էր պետության կայացվածության, դրա կազմակերպվածության, ռեսուրսային, մոբիլիզացիոն ու կառավարման համակարգերի

աշխատունակությունը: Ինչպես նշում է Չարլս Թիլին, օրինակ բերելով Եվրոպական պետությունների կայացման գործում պատերազմների ազդեցությունը, «Եվրոպական պետությունների կառավարման համակարգի ձևավորման գործում հենց պատերազմներն էին վճռորոշ ազդեցություն թողնում, այլ ոչ թե այս կամ այն եվրոպական թագավորության միաստուն էր որոշում դրա կառավարման ձևաչափը» [12, էջ 92]:

Եվրոպական պետությունների կազմակերպվածությունը և դիմակայությունը Թիլին բացատրում էր պատերազմի երևույթով, այսինքն Եվրոպայում ընթացող անընդհատ և չընդատվող պատերազմներն էին ձևավորել պետական կառավարման այն համակարգը, որը հետագայում ամենակենսունակը ճանաչվեց ու դիմացավ փորձություններին, որոնք էին առաջին և երկրորդ աշխարհամարտերը:

### **Եզրակացություն**

Հստակ թիրախավորված ազգային անվտանգության ռազմավարությունը պետության կայուն զարգացման, նրա ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմակայելու համակարգված մոտեցման փորձ է, թե ինչքանով է այն հաջող սա արդեն հարցի այլ կողմն է: Իսկ հաջողության համար, հարկավոր է, որ ռազմավարությունների մշակման որոշակի ավանդույթ, մշակույթ ու ամենկարևորը գիտելիք ձևավորվի, որը և հիմք կարող է հանդիսանալ նմանատիպ փաստաթղթերի կազման համար, որպեսզի դրանք ուղենիշ հանդիսանան պետության զարգացման ու սեփական շահերը առաջնորդման գործում:

Անվտանգային ռազմավարության մշակման ունիվերսալ մոդելներ գոյություն չունեն, դրանք պետք է իրականացվեն հիմնականում տեղական առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչը նշանակում է, որ «Հ-ի դեպքում»

1. Ազգային անվտանգության ռազմավարության մշակումը և դրա ներկայացումը հանրությանը պետք է օրենսդրորեն պարտադրված լինի թե իրականացման և թե կատարման առումով:

2. Որպես թիրախավորում պետք է ընդունել պատերազմի անխուսափելիության գաղափարը՝ պետության ռազմա-քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլ ուղղություններով պլանավորման մշակումների համար:

3. Պետք է շարունակական ներդրումներ իրականացնել պետության անվտանգության, առկա ու հնարավոր մարտահրավերների պայմաններում, ակադեմիական, խորքային ուսումնասիրություններ կատարելու համար, ինչը հիմք կհանդիսանա նոր ռազմավարական մեթոդաբանության մշակման համար:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. Cambridge English Dictionary, Strategy, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/strategy>
2. ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարան, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2012թ.
3. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, [https://www.primeminister.am/u\\_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf](https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf)
4. **Suri, Jeremi and Valentino, Benjamin**, “Sustainable Security: Rethinking American National Security Strategy” 2016, <https://tobinproject.org/sites/tobinproject.org/files/assets/Sustainable%20Security%20-%20All%20Chapters.pdf>
5. **Suri, Jeremi** Why We Need a New National Security Strategy, <http://jeremisuri.net/archives/1394>
6. **Mintzberg, Henry** Patterns in Strategy Formation, Management Science, Vol. 24, No. 9 (May, 1978), pp. 934-948, [https://web.archive.org/web/20131019210812/https://faculty.fuqua.duke.edu/~charlesw/LongStrat2010/p](https://web.archive.org/web/20131019210812/https://faculty.fuqua.duke.edu/~charlesw/LongStrat2010/papers/class%2010/Patterns%20of%20Strategy%20Formulation.pdf)
7. National Security Strategy Archive, <http://nssarchive.us/>
8. National Security Strategy Processes: Past, Present, and Future, <https://www.jstor.org/stable/pdf/resrep23188.7.pdf?acceptTC=true&coverpage=false&addFooter=false>
9. The National Security Strategy: Documenting Strategic Vision Second Edition Don M. Snider March 15, 1995, [https://www.globalsecurity.org/military/library/report/1995/ssi\\_snider.pdf](https://www.globalsecurity.org/military/library/report/1995/ssi_snider.pdf)
10. **Աթոյան, Վարդան** Ազգային անվտանգության հիմնասիւնդիրներ, էջ. 30, Երևան, 2014թ.
11. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinear\\_m.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinear_m.pdf)
12. **Тилли, Чарльз** Принуждение, Капитал и Европейские государства 990–1992 гг. – М.: Издательский Дом «Территория Будущего», 2009, <https://clck.ru/sSkpA>

*Շճանա/Հանձնվել է՝ 27.07.2022*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 03.08.2022*

*Принята/Ընդունվել է՝ 05.08.2022*